բազմիլ գլխաւորաց երից ազգաց ։ Եւ Դատաւորն զհրովարտակն ցՆուրի Էֆէնտի ընթեռնուլ զայն 'ի լուր ամենեցուն ։ Եւ նորա բացեալ զբերան իւր ասէ՝ ընթերցան առաջին Խաթթի Շէրիֆք և արձանագրեցան 'ի Դատարանի, որոց պատճէնքն են առ մեզ. այժմ հարկ է ընթեռնուլ ունկնդիր լինել եւ ուշադրութեամբ 'ի միտ առնուլ զբան նոյն հրովարտակիս, զոր շնորհեալ է բարերար Արքայն . և ակիզըն արարեալ ընթերցաւ, եւ զարմացեալ ամենեցուն ընդ ոճս հրովարտակին, բարիս մաղթեցին Արքայի, և զոր ինչ հրամայեալ է՝ հարկ է կատարել առէին ։ Զորոյ զթարգմանութիւնն դիցուք 'ի ստորեւ ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Թարգմանութիւն երկրորդ հրովարտակին ։ Որոշումն դրանց և եկեղեցւոյն Հայոց ։ Վիճաբանութիւն ընդ դատաւորին վասն բաժանողութեան Այրին ։ Կախումն կանթեղաց Հայոց ։

ՈՒՂԵԱԼ առ Կուսակալն Դամասկոսի Սիւլէյման Փաշայ, առ Դատաւորն Երուսաղէմի, առ Նուրի Էֆէնտի Մուվէլլայ, առ չորս գլխաւոր Կրօնապետս, առ Քաղաքապետն, և առ այլս ։ Ի հասանել Կայսերական հրովարտակիս՝ գիտութիւն լիցի, բարեյիշատակ նախնին իմ Սուլթան Սէլիմ առաջին, 'ի տիրել իւրում յաղթանակաւ քաղաքին Երուսաղէմի, տուեալ է որիշ որիշ Հայոց և Յունաց Կայսերական հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) վասն ուխտի տաճարին Ս. Յարութեան, որոց պարտ և արժան էր, զգուշութեամբ վարիլ նոքօք և չառնել ինչ հակառակ նոցին. սակայն ժամանակ առ ժամանակ 'ի պատահիլ խռովութեանց 'ի մէջ երկուց ազգաց սակս նոյն տաճարի, տուեալ են հրովարտակք երկուց կողմանց հակառակ իմաստիւք ։ Եւ 'ի հրդեհիլ տաճարին՝ վերստին անկեալ է խռովութիւն 'ի մէջ նոցին, որոյ վասն յառաջին Նուագի կազմեցաւ ժողով Կայսերական հրամանաւ, յորում էին